

Միջազգային չափանիշներ

Ստորև ներկայացված են համաշխարհային մակարդակով հանքարդյունաբերության ոլորտը կանոնակարգող հիմնական չափանիշները: Լիդիանը պարտավոր է համապատասխանել իր բաժնետերի, այն է՝ ՄՖԿ-ի և ՎՋԵԲ-ի պահանջներին:



Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ)

Բնապահպանական և սոցիալական կատարողական չափանիշներ

ՄՖԿ կատարողական չափանիշները պարտադիր են բոլոր այն ընկերությունների համար, որոնցում ՄՖԿ կատարում է ներդրումներ և որոնց տրամադրում է խորհրդատվություն: Այդ չափանիշները սահմանում են բնապահպանական և սոցիալական ռիսկերի կայուն կառավարման հետ կապված ընկերությունների պատասխանատվության շրջանակը:

- Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում
- Աշխատանք և աշխատանքային պայմաններ
- Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտվածության կանխարգելում
- Համայնքային առողջապահություն, անվտանգություն և ապահովություն
- Հողի ձեռքբերում և հարկադրված վերաբնակեցում
- Կենսաբազմազանության պահպանում և բնական ռեսուրսների կայուն կառավարում
- Բնիկներ
- Մշակութային ժառանգություն

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎՋԵԲ)

Կատարողական պահանջներ

ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի նախագծման և իրականացման ժամանակ ևս անհրաժեշտ է առաջնորդվել կայուն զարգացման ապահովման համար սահմանված միջազգային չափանիշներով: Բնապահպանական սոցիալական խնդիրների և ազդեցությունների հիմնական ոլորտները ներառված են տաս կատարողական պահանջներում: ՄՖԿ չափանիշներով սահմանված ոլորտների պես, ՎՋԵԲ պահանջները ներառում են նաև “Ֆինանսական միջնորդներ” և “Տեղեկատվության հրապարակումն ու շահագրգիռ կողմերի ներգրավումը”:



Հանքարդյունահանման և մետաղների միջազգային խորհուրդ

ՀՄՄԻ դա 21 արդյունահանող և մետաղական ընկերություններ, 35 ազգային և տարածաշրջանային միություններ միավորող ճյուղային մարմին է, որի նպատակն է բարելավել տվյալ ոլորտի կայուն զարգացման ընթացքը:



Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգիրք (ՑԿՄՕ)

ՑԿՄՕ դա ոսկու արդյունահանման բնագավառում կիրառվող օրենսգիրք է, որի անդամ-երկրները պարտավորվում են դրսևորել պատասխանատու մոտեցում ցիանիդի ձեռքբերման, փոխադրման, պահեստավորման և մշակման գործընթացների նկատմամբ: Համապատասխանությունը ենթակա է ստուգման անկախ աուդիտորի կողմից:



Անվտանգության և մարդու իրավունքների վերաբերյալ կամավոր սկզբունքներ (ԱՄԻԿՄ)

ԱՄԻԿՄ արդյունահանող ընկերությունների համար սահմանված ուղեցույցներ են, որոնց նպատակն է ապահովել գործունեության անվտանգությունն ու ապահովությունը՝ ապահովելով մարդու իրավունքների պաշտպանություն:

